ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՐԱՐ

MINISTRY OF DIASPORA OF
THE REPUBLIC OF ARMENIA

MINISTER

"22" 09 2017
01/58-77

ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի խոսքը
ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի 90-ամյակի կապակցությամբ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանը հայ պատմագիտության վաստակաշատ ներկայացուցիչներից է, ով շուրջ 60 տարի իր կյանքն ու գիտական գործունեությունը նվիրել է հայոց պատմության, մասնավորապես, Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմության տարաբնույթ հիմնահարցերի ուսումնասիրմանը: Նրա գրչին են պատկանում ավելի քան 100 գիտական աշխատանքներ, որոնց շարքում ռուսահայ նշանավոր գաղթօջախների՝ Դոնի, Մոսկվայի, Պետերբուրգի հայության հասարակական-քաղաքական, հոգևոր-մշակութային ու սոցիալ-տնտեսական կյանքը ներկայացնող մեծարժեք ուսումնասիրություններ: Վլադիմիր Բարխուդարյանը մեծ ավանդ ունի նաև հայ-ռուսական պատմական կապերի, Արևելյան Եվրոպայի երկրների հայկական համայնքների պատմության ուսումնասիրությունների իրականացման ու կազմակերպման գործում: Բազմավաստակ գիտնականը տասնամյակներ շարունակ ղեկավարել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ Նախագահության տարբեր օղակներ, հանդիսացել ԲՈՒՀ-ական ավարտական քննական և ՀՀ ԿԳՆ ԲՈՀ-ի մասնագիտական հանձնաժողովների նախագահ, հեղինակել և գլխավորել է դպրոցական, ԲՈՒՀ-ական և ակադեմիական հրատարակությունների խմբագրական կազմերը: Մասնագիտական բարեխղճությունը, մարդկային ու ընկերային բարձր որակները, կազմակերպական ու ստեղծագործ հմտությունները, հարաբերվելու յուրահատուկ ձիրքն անվանի գիտնականին ու քաղաքացուն մեծ ճանաչում են բերել ինչպես հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Բախտ եմ ունեցել երկար տարիներ բարեկամություն ունենալ պայծառ ու հայրենասեր, մարդկային ու բարի գիտնականի, ընկերոջ և մեծ հայի հետ:

Ցավոք, սիրելի Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանն այսօր մեզ հետ չէ, սակայն համոզված ենք, որ նրա գործն ու հիշատակը մշտապես ուղեկցելու են մեզ՝ դառնալով երկարամյա, բեղուն, արդարամիտ ու բարի կյանքի օրինակ:

Ողջունում ենք ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի 90-ամյա հոբելյանի շրջանակներում ՀՀ Գիտությունների ակադեմիայում և Պատմության ինստիտուտում անցկացվող միջոցառումների շարքը՝ հաջողություններ մաղթելով ձեռնարկվող ծրագրերին:

Հարգանքներով՝

ՀՐԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ 0010, Երևան, Վ.Սարգսյան 3
3 Str. V. Sargsyan, Yerevan, 0010

tel.: (374 10) 58 56 01 (801)
fax.: (374 10) 58 91 57
E-mail: minister@mindiaspora.am